

ԱՎԱՆՈՐԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Պոչխարիս համար	12 ֆր.
սարկիսի	7 "
վեցուսնայ	7 "
Արսասահմանի	
համար սարկիսի	15 ֆր.
վեցուսնայ	8 "
Ավերիսայի համար	
սարկիսի	3 ֆր.
վեցուսնայ	1.50 "

Երանուցման տարի
 40 սանթիմ խի վերջին
 20 սանթիմ համար 20 սանթիմ
 քիսի կ. հրեհիկ սեյի
 սեղաններու համար
 27 0/0 զեղք կրայ:

Հանուսի համար ձեռ
 ֆե 10 սանթիմ է

ՇԱԲԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՂՈՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԻ ԵՒ ՇԱԲԱՏ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРИЯНЪ

Նամակ եւ դրամ
 ու կեղ խմբագրութեան
 հասցիին

Редакция на вѣстанка
 "Шаржунъ"
 Варна

Redaction du journal
 "Charjoun"
 Varna (Bulgarie)

Պոչխարիս համար
 ձեռքի
 15 ԱՎԵՐԻՍ
 Արսասահմանի համար
 ձեռքի
 20 ԱՎԵՐԻՍ

Գրութիւնք եւ չեմ
 տրուի

ՇԱԲԱՏՈՒՄՆԻ ԲԱԿԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԲ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷ ԵՐԱՇ.
 ԽՈՒՈՐԱԿԱՆ ՍՕՅԻՍ ԲՈՂԱՔԻ ՎԻՃԱԿ
 ԿԱԶՆՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փափաքողները կրնան
 իրեն գրմի
 Ձար-Պորիս փողոց Վառնա

ԿԱՐԾԻՔԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԻՆԸ

Մարդկութիւնը երկար կռիւ-
 ներ հարկադրուեցաւ մղել գա-
 զափարի բռնակալներու դէմ,
 ձեռք բերելու համար կարծիքի
 ազատութիւնը: Բայց դեռ այ-
 սօր բանակ կը կազմեն մեծ ու
 փոքր այդ բռնակալները:

Հինքը այն ոգորմելի տեսու-
 թիւնը կը պաշտպանէին թէ,
 մարդիկ սղատ են անհատապէս
 իրենց համար կարծիքներուն
 նախ, ցորչափ այդ կարծիքները
 իրենց կը վերապահեն: Բայց,
 նոյն վայրկեանէն երբայդ կար-
 ծիքները հրապարակ կը հանուին,
 կառավարութիւնները իրաւունք
 ունին միջամտելու, և երբ ֆիւ-
 սակար տեսնեն յայտնուած կար-
 ծիքը, անոր հեղինակը պատժե-
 լու: Կարծիքի հրապարակման
 խնդիրը ա՛լ աւելի զբաղեցուց
 բռնակալները այն օրէն, երբ
 տպագրութիւնը գտնուեցաւ ու
 մամուլը հսկայ ուժի մը փոխ-
 ուեցաւ, երբ անհատական կար-
 ծիքները, շնորհիւ սոյն հրաշալի
 գիւտին, աներեւակայելի արա-
 զութեամբ ու ընդարձակութեամբ
 սկսան տարածուիլ աշխարհի մէկ
 ծայրէն միւսը, թափանցել մարդ-
 կութեան ամենախոնարհ խուս-
 բուն մէջ, լոյս սփռել անոնց վի-
 ճակին վրայ, փարատելով թանձր
 տղիտութիւնը:

Այդ նոր ազդակին դէմ ամէն
 գնով մարտնչել որոշեցին բըռ-
 նակալները: Ստրասփելի կռի-
 ներ ծագեցան, որոնք գարեբ
 տեւեցին ու կը աւելն գեռ աշ-
 խարհի գանազան անկիւններուն

վրայ:
 Բայց յազմանակը տարուած է
 փառասորապէս:

Այսօր այլեւս նոյնայի են այն
 մարդիկ որոնք կարծիքի ազա-
 տութիւնը կը բռնաբարեն ու է
 կերպով, որոնք կը պահանջեն
 արգիլել որ մարդիկ իրենց կար-
 ծիքը անկեղծօրէն ու ազատօրէն
 յայտնեն: Կարծիքի ազատու-
 թեան թշնամիները ոչ մէկ մի-
 ջոցի առջեւ չեն ընկրկիր, անոնց
 ամենէն անարգներն անգամ չեն
 կասեցներ զիրենք, ու քանի ա-
 զատութեան գազափարը քայլ մը
 եւս առաջ կերթայ, հալածանքի
 միջոցներն ալ, կը նրբանան և
 այդ թշնամիները, կոշտ ու-
 ժին գործածութեան չի կրնալով
 գիմել, կը գիմեն զանազան քո-
 վընտի միջոցներու, բանաւր-
 կութեան, վարկարեկութեան,
 և այլն:

Պէտք է ընդունիլ որ արտա-
 յայտուած կարծիք մը, որքան ալ
 տարրական ըլլայ, արժէք կու-
 նենայ միմիայն անկեղծութեան
 ու անշահախնդրութեան գնով:
 Երբ անգամ մը կը տեսնենք թէ
 կարծիքի մը արտախայտը զերծ
 է իր անձին շահը կամ իր անհա-
 տական կիրքերը ապարէզ նե-
 տելու հոգէն, այլևս իրաւունք
 չունինք արհամարհելու անո-
 կարծիքը: Անշուշտ մեր խօսքը
 անոնց համար է, որոնք ունին
 պահանջուած կարգացումն ու գի-
 տակցութիւնը, որոնք առած են
 կեանքի գործունէութեան ընդ-
 հանուր օրէնքները, ընկերաբա-
 նական սկզբունքները, և ունին
 պէտք եղած ծանօթութիւնը զի-
 բենք շրջապատող իրերու և ե-
 րեւոյթներու վրայ:

Օրինակ մը կրնայ աւելի լու-
 սաբանել մեր միտքը: Երբ այս
 տեսակ մարդ մը հիւանդ է, իր
 հիւանդութեան և անոր դարմա-
 նումին վերաբերմամբ ենթակա-
 յին յայտնած կարծիքը պէտք
 չէ զանց առնուի, մանաւանդ
 բժիշկին կողմէ: Ընդհակառակը,
 իր արուեստին և իր պարտակա-
 նութեան գիտակից բժիշկ մը

ուշի ուշով կը հետաքրքրուի ա-
 նոնցմով: Ինք կը թելադրէ որ
 ենթական յայտնէ իր զգացածն
 ու խորհածը, որովհետեւ եթէ
 բժիշկը հիւանդութեանց դեղե-
 րու անուններ և տիակնօսութիւ-
 ծանօթութիւններ ունի, անոնք
 չեն կրնար ճշտու գործագրուիլ,
 առանց հիւանդին տալիք լուսա-
 րանութիւններուն, իսկ երբ բը-
 ժիշկ մը զեղ մը տուած է, դարձ-
 եալ անոր սղեցութեան բարե-
 բար կամ ֆլեսակար ըլլալը հաս-
 կրնալու համար պէտք ունի հի-
 ւանդին կարծիքը ստանալու:
 Հիւանդը ի՛նք միայն կրնայ զգալ
 թէ տրուած զեղ մը ծառայե՞ց
 թէ ոչ իր նպատակին, օգտակա՞ր
 եղաւ թէ ֆլեսակար իր հիւան-
 դութեան:

Հիւանդ մը անպատճառ բժիշկ
 ըլլալու պէտք չունի հասկնալու
 համար թէ տրուած զեղ մը ի-
 բեն ֆլեսակար թէ օգուտ կը պատ-
 ճառէ, կամ թէ առաջարկուած
 դարմանում մը իր ֆիզիքական
 կազմին կը համապատասխանէ թէ
 ոչ: Բժիշկ մը աւելի հաստատօ-
 թէն կրնայ վճռել թէ այս ինչ
 հիւանդը կրնա՞յ այնինչ վիրա-
 բուժական գործողութեան տոկալ:
 Թէ նոյն ինքը հիւանդը ի՞նչ ծա-
 միտ բժիշկը միշտ այս տեսակ
 պարագաներու մէջ հիւանդին կը
 գիմէ, ու անոր կարծիքը իրեն
 համար թանկագին է: Պժգանք
 կազդէ օրդարեւ տեսնել բժիշկ
 մը, որ հիւանդին դէմ կանգնած
 անոր արտունջներուն փոխան,
 սա տեսակ լիրբ յանդիմանու-
 թիւններ կուզէ անոր: Կոչու-
 բժիշկ չես, լռէ՛ս: Ինքզինքը ա-
 մենագէտի տեղ դնելով հիւան-
 դին գիտողութիւնները արհա-
 մարհող բժիշկը ոչ միայն անպէտ
 ու ֆլեսակար է, այլ նաև դահիճ
 մըն է հիւանդին համար: Հե-
 տեաբար, խելացի հիւանդ մը
 երբէք իր կեանքին փրկու-
 թիւնը չի վստահիր անոր: Կը
 ճամբէ պարզապէս, աւելի արժա-
 նաւորը բերելու համար:

Հայ ազգը կը նմանի, այսօր,
 իր վիճակին գիտակից հիւանդ

մարդու մը, Յեղափոխութիւնը
 անոր հիւանդութեան դարմանն
 է, յեղափոխականը՝ բժիշկը:

ՇՄՍՊ

ՆԱՄԱԿ ԼՈՆՏՈՆԷՆ

ՆՈՐԱՏԻՊԱՐ ՀԱՅ ԽԱԶՆՈՂ ՄԸ

Երբ նորատիպ խաչագող անունը
 կուտամ, ատի բնու չը շփոթէք նո-
 րութեան հետ: Ոչ, այն անձը որ
 ի գործ կը դնէ սոյն լիրբ զբաղու-
 գոյութիւն ունի Անգլիոյ մէջ տա-
 րիներէ ի վեր, դեռ 1882 թուակա-
 նէն, բայց իր գործունէութեան ճիշդ
 չըջանը կսկսի 1896-97էն, երբ հայ
 արիւնով այնքան ուրիշ մարդա-
 կերպներ ալ հարստացան ու պարտ-
 տացան եւ այսօր, իրենց երբեմնի
 անօթի էութիւնը արժանացուցած են
 հանգիստ գիրքերու:

Տալու համար ճշգրիտ եւ մանրա-
 մասն պատմութիւնը այս նորագիւտ
 խաչագողին, հարկ է որ քիչ մը հե-
 ունէն սկսիմ եւ պարզեմ խնդիրը
 իր աստիճանական խաւերուն մէջ:
 Տեղեկութիւնները հաւաքած եմ
 անգլիացի արժանահաւատ Րիբօր-
 թը ըրի մը յայտնութիւններէն եւ
 տարակոյսի տեղիք չկայ երբէք:

Այս մարդը որ իր իսկատիպ ա-
 նունով կը կոչուի Լեւոն Չէքէժեան,
 հոգմէական եկեղեցիին պատկանող
 հայ մըն է. իր բացատրութեամբ
 «Եսիսկոպոս Մալաթիոյ հայ հոգմ-
 մէական եկեղեցու», Առաքին ան-
 գամ Անգլիա կերելու 1885ին եւ
 1890ին կը հրատարակէ բրոշուր մը՝
 ուր իր կեանքին պատմութիւնը կը-
 նէ:—Որպէս թէ Մալաթիա եպիս-
 կոպոս է եղած ինք երկար տոնն,
 սակայն ի վերջոյ, կռիւ յարուցա-
 նելով իր պաշտօնակիցներուն հետ,
 թողած է պապական տուտու կեղծ-
 ուպատիբ դաւանանքը, ընդգրկելու
 համար բողոքականութիւնը:

Անգլիոյ մէջ, այս հոյակապ անձին
 առաջին պաշտօնը կը ըլլայ սխոտապա-
 նութիւն, այսինքն, ձիեր հոգալ,
 աղբ տեղափոխել ձեռնակառքով եւ
 այլ տաժանքով աշխատանքներ,
 այնպէս որ, կըսէ ինք իր սեփական
 գրքին մէջ, քրտինքը անձրեւի նը-
 ման կը կաթեր երեսիս ու ամբողջ
 մարմնոյս վրայէն: Մեր անզուգա-
 կան հայը, տեսնելով թէ այս անաս-
 նային կեանքը տանելի չէ, կսկսի
 շրջապատի հաւատամուլ տխմարներուն

կրօնական համոզումները չհազարձել եւ շատ ալ յուսախաբ չը մնար այդ քայլին մէջ, կը հրատարակէ վերոյիշեալ պրօշիւրը, ուր կը մանրամասնէ նաեւ իր նոր եւ ճշմարիտ փարախը մտնելուն առիթները, իր աստուածավախ եւ շերտեանդ տենչերը, եւ, օր մըն ալ, շարք մը կղերներ, նկատելով մոլորեալ ոչ-խարին ընտրեալ հօտին մերձեցումը, կը զրկեն զայն իր լուսաւոր Պէլիֆոսք քաղաքը, երկու քարոզիչներու, որպէս զի կատարելագործեն զինքը իր աստուածաբանական ճիւղին մէջ եւ առաքեալ մը պատրաստեն իրմով:

Այդ միեւնոյն ժամանակներն է որ վրայ կը հասնին հայ կոտորածները: Չէքէմեան, հասած համարելով պատեհութիւնը, կսկսի գործի, կը հռչակէ ինքզինքը թիւրքական հայաժողովներէն փախստական հայ մը եւ, հայ եպիսկոպոսական հանրաժողովներով՝ բնմերէն ծայր կուտայ աստեանաշունթիւններ ու զիմումներ ընելով միանգամայն նիւթական անկողնի վրայ բարեխիտ անգլիացիներուն, որոնք շատ քիչ անգամ կը մերժեն, երբ մանաւանդ կրօնական գոյն կը կրէ խնդիրը:

Հանգուցեալ Ուէյնիլինիսիոյ գոյք սը, հայոց լաւագոյն բարեկամներն էին մէկը, որ մեծապէս կը շահագրգռուէր այդ ատենները հայաւոր նպատակ շարժումով, յիշեալ ճիւղին շահատակութիւնները լսելով նամակով մը կը զգալուցանէ հայաստանները չը խաբուի ու չը վստահի Չէքէմեան կոտորածէն: Այդ նամակը կը տօնի «Մօրնինկ Լիտեր» պատական օրաթերթի խմբագրութեան մօտ է ներկայիս:

Նոյն շրջանին է որ Չէքէմեան կսկսի նոյնպէս բանախօսել «թէ ինչ պէս փախայ պապականութենէն 1882ին», թէպէտեւ, իր գրքին մէջ ատկէ 5-6 տարի մը առաջ յայտարարած էր որ մինչեւ 1885 հայ հրեւոյնական եկեղեցիին կը պատկանէր, Սակայն զուգահեռ նամակը ազդեցութեան զուգահեռ մնացած չէր եւ Չէքէմեանի հացը ձեռքէն խլուած, Ուստի, օր մըն ալ, աղտոտ ու պատառատուն հանդերձներով, կուգայ եւ առաջարկ կընէ փոխերէցի մը՝ թոյլ տալ իրեն երեւնալ հայ եպիսկոպոսական տարազներով պազարի մը մէջ եւ այդ գիրքով թէյ կամ սուրճ հրատարակել տիկնանց, մի քիչ գրամ հաւաքելու համար: Անգլիացի

քարոզիչը կը սարսափի սոյն առաջարկէն, բայց, Չէքէմեան կը համոզէ որ շահագրգռեց գրաւիչ կըլլայ այդ կերպով եւ պազարն ալ կանցնի յաջող:

1896ի սկիզբները կը թելադրէ անգլիացի մէկ նշանաւոր կրօնականի մը՝ զիմումը ընել ազատ բողոքական եկեղեցւոյն զինքը որպէս քարոզիչ ընդունելու եւ փորձը կը վերջանայ յաջողութեամբ որովհետեւ մեր այս հոյատիպար հայը ինչ կը հռչակուի որպէս «նոր հասած փախստական» մը, թէեւ Անգլիա կը գտնուէր ան 12 տարիներէ ի վեր:

Ձեռք ձգելով արքեպիսկոպոսի տիտղոս մը, ապա երեւան կուգայ նոյն տարուան նոյեմբերի ժամանակները որպէս գեր. Լեւոն արքեպիսկոպոս Մալաթիոյ եւ պատրիարք Հայաստանի, կսկսի ձեռնադրել նաեւ եպիսկոպոսներ: Ալ գործը շտկած է, Ատեն մը վերջ, այս հայ արքեպիսկոպոսն ու պատրիարքը կատարէ «Անգլիոյ ազատ բողոքական եպիսկոպոսական եկեղեցին» եւ ստորանուամբ ալ աստեաններով մայրիկ եպիսկոպոս կ'օժէ:

Հիմա սենեակ մը ունի Լօնտօնի մէկ անկիւնը, որու հասցեով ծանուցումներ կուտայ գրեթէ սաբոյվանդակութեամբ:—Անոնք որ կը բազման սրբազան կարգ ընդունիլ, թող գիտեն մեզ՝ մանրամասնութեանց համար, ի՞նչ են այդ մանրամասնութիւնները:—Հող չէ թէ նպարակաճառ ըլլան, մտաւճառ հացագործ, ատարագործ կամ ազրահաւաք եւ կամ ուրիշ գործի պատկանող, եթէ կրնաս զրկել 5 սակի հայ արքեպիսկոպոսին եւ Ազատ բողոքական եպիսկոպոսական եկեղեցին հնարողին, յաջորդ օրը ձեռքդ է վկայագիրը: «Սրբազան» Չէքէմեանի պատրիարքական անունն է Մար թէոֆիլոս, իսկ առեւտրականը՝ Չարլս Սիդլընս թէպէտեւ «Մարտիկոս խմբագրութեան կը զրկուի զի սի—սի միլիէն վերոյիշեալ վկայագրին, իր իսկատիպ ձեւին մէջ, բայց որովհետեւ մեր ընթերցողներէն բոլորին հնար չէ տեսնել զայն, հոս կը դնենք բոյանգակութիւնը:

Ճակատը՝ սաղաւարտ մը, եպիսկոպոսական գաւաղաններով: Վրան՝ «Մար թէոֆիլոս», երկրորդ տողը՝ «Հայաստանի միացեալ պատրիարքութեան» իսկ երրորդ տողին վրայ, անգլիատառ՝ «խաղաղութիւն ամենեւեցուն»:

ցուն՝ Սաղաւարտին աջ ու ձախ կողմերը գրուած լատիներէն՝ շու Տիեո փոսթ Եեանս իսկ ներքեւը բոյս (խաղաղութիւն):

Այնուհետեւ անդիք սեւ տառերով կսկսի վկայագիրը:—

«Անգլիոյ Ազատ Բողոքական Եպիսկոպոսական Եկեղեցի, այլապէս հին բրիտանական եկեղեցի, որով որդեգրուած է նազովրական էքլէզիան (եկեղեցին):

«Կր վկայեմք սովա, որ մենք Մար թէոֆիլոս,

չնորհիւ մեր պատրիարքական գերագոյն իրաւունքին, օժեցինք ու կարգեցինք

արժանապատիւ ատիւններն Տիտաս քայոսի (Վ. Ա.) քարոզիչի վարդապետի եկեղեցւոյ: (վարդապետ բառը գրուած է հայերէն):

Եւ ասոնց կը յաջորդէ խոշոր կնիք մը՝ գրեթէ վերեւ նկարագրածիս բովանդակութիւնով եւ խօսքերով, իսկ այնուհետեւ թուակներ վայրը, եւ այլն:

• • •

Ահա ձեզի անզուգական հայ տիպար մը շնչարիտ խօսած ըլլալու համար՝ քիչ մըն ալ պարծենալու իրաւունք չունի՞ք արդեօք: Այսօր կանցնի 20 տարին՝ որ այս մարդը այս ու ան շահագործելով կապի, իսկ առաւել քան 8 տարի է որ, Լօնտօնի պէս տեղ մը նստած, խոհարարի մը ջարդած կողմերներուն չափ ալ ինք «եպիսկոպոս» կ'օժէ, իւրաքանչիւրէն անուելով 5 սակի (130 ֆրանք): Ի՞նչ քանի անգամներ հրապարակուած է խնդիրը մտնուելն մէջ, բայց եւ ոչ մէկը կը համարձակի ձեռք դնել վրան: Մարդը արքեպիսկոպոս եւ «Միացեալ Հայաստանի սիք») պատրիարքութեան» անգամ, հետեւաբար, իրազօրը իր պաշտօնին... ու կ'օժէ՛, կ'օժէ՛, ու կ'օժէ՛... անգլիացի, ֆրանսացի, գերման, հայ, թուրք հրէայ ինչ ազգէ որ ըլլան անոնք եւ այդ սրբազան օժեցիները ո՛չ միայն 5 այլեւ 50 սակի ալ ամենայն սիրով կուտան՝ որովհետեւ գիտեն թէ ատի իրենց եկամտի անսպառ ազրիւն է սպառային:

Թող մեր ընթերցողներն ալ կարգան ու հիանան այս անպատկառ հրէշին սխրալի գրուածներով:

ՍՈՐՈՒՔԻ ՍԱՆՏՐԸ

ԸՆԿԵՐՈՅՍ Յ. ԱՂԱՍԷՐԻՆ

— Բարի՛ լոյս, չորպաճի՛.
— Բարի լոյս, Հիւսնի չափուչ.
Եւ խոր հոռոշանքով մը հազիւ գրուիս վեր առած էի տոմարներուս վրայէն, երբ այցելուս արդէն սկիւրէթներէս մէկը վառած ու աթոռ մը գրաւած էր, իսկ վաճառանոցիս ծառան դէպի մօտակայ սրճարանը կը փութար սուրճ ապսպրելու:
Մեր քաղաքին ոստիկանատան չտվուչն էր այս մտերմական հիւրը որ վաճառանոցիս ճամբան սորված էր ամիսներ առաջ դատական գործի մը առթիւ: Պաշտօնապէս թէեւ երեք այցելութիւններու պատիւը կը բաւէր, բայց Հիւսնի չափուչ այն սիրալիք հակներէն է, որոնք պաշտօ-

նական առթիւ մը ծանօթանալէ ետքը անպաշտօն այցելութիւններու առթիւ չեն փախցնէր, Ամէն անգամ երբ պարտականութիւնը զինք այս կողմերը բերէ չի մոռնար հանդիպիլ ինձի ինչպէս որ ինք կըսէ զչորպաճիին՝ սիկարան ու սուրճը խմելու:

Պիտի հարցնէք թէ ի՞նչ գործ ունի ոստիկանութեան կամ դատարանի հետ, Դա՛տ, Աստուած չընէ, տունս տեղս վրայ կուտամ դատ չեմ բանար... Թիւրքերոյ մէջ, Ի՞նչ դատական փորձանք մըն էր և պատճառը, կրնայի՞ք երևակայել... մօրուքի սանտր մը, Այո՛, թէեւ փղոսկրէ, բայց վեր...
*) Չորպաճի—Ապուր տուող: Ժամանակին Ենիշէրիները սուրած են այս ախտոցը քրիստոնեայ հարուստներուն, բառին այս ծագումը կարծեմ պերճախօսօրէն կը բացատրէ արդէն անոր փոխարեակաւ իմաստը:

Չապէս մօրուքի սանտր մը:

Մեր չուկային մէջ էն նշանաւորներէն մէկն է Առաքելին եւրոպական սպրանքներու խանութը եւ ինք Առաքելն ալ իմ վաղեմի բարեկամս: Թաճախ կերթամ նստիլ իր խանութը երբեմն գործով, երբեմն ալ լոկ բարեկամական տեսակցութեան համար: Քանի մը ամիս առաջ դարձեալ նրստած էի հոն, երբ խանութին դուրը յանկարծ ուժգին բացուելով մէկը ներս խուժեց, Հսկայ հասակ մը կապոյտ պատմուճանի մը մէջ պարուրուած և սպիտակ խոշոր փաթեթ մը, որու ներքեւէն մոխրագոյն, լայնածաւալ մօրուք մը կախուած էր, հազիւ տեղ թողնելով վրոյզ մը կողան աջքերու և տափակ քթի մը:

Առաջին ակնարկով իսկ դժուար չէր գուշակել որ զիւղական մօլլա մըն էր եկողը: Չը բարեց եւ ա-

կը ջանամ նորէն անդրադառնալ ու հաղորդել այս մասին:
Մ. ՅՈՒՂԿ
12 Ապրիլ, 1906

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷ՞՞

Արդի գիտական մանկավարժութեան հիմն սպիւր Եօհան Կրիտիլիս Հէրպարդ տնային կըրթութեան համար բաժն է. «կրթութեանը ծնողներու գործն է, տունէն կելլայ ան և կրկին հոն կը դառնայ բնագիտական»: Ահա նիւթ մը որուն պատմութիւնը այնքան հին է, որ քան մարդկային քաղաքակրթութիւնը: Այսօր համայնք մը կազմող բոլոր ընտանիքներուն վրայ մարդկային, ընկերական, բարոյական վաճմ պարտք մը դրուած է իր սերունդը ազնուացնելու, զայն կրթելու՝ ուսուցանելու և դաստիարակելու համար: Ահա այն ի՞նչ է ընտանեկան կըրթութեանը:

Ընդհանուր բառերով ընտանեկան կրթութեանը կրթական բոլոր ազդակներուն համագումարն է: Պէտք է գիտնալ թէ ընտանիքի մը բնորոշող յատկանիշը միութեանն է: Կրթութեան համար ալ ամենազօրեղ ազդակ մըն է միութեանը, որովհետեւ ընտանեկան միութեանը շատ աւելի զօրեղ, սերտ և ներքին է քան դպրոցականը, այս պատճառաւ ընտանիքն ալ կրթութեան համար ամենէն բարեբեր գետինն է: Մեղաք համար բնկերական և բարոյական նուիրական պարտք մըն է ընտանեկան միութեանը ապահովել կատարելապէս:

Ընտանիքին մէջ ամէն ինչ ինքնըստինքեան կը ծաղկի. թէ չար և թէ բարի սերմերն հոն կը ծլին անօրինակ արագութեամբ: Պաշտիկները մեծերը կընդօրին-

անց ուշադրութեան իսկ արժանացնելու: Առաքելի ժպտալի բարեւ ու նստելու հրաւէրը, ձեռքը մէջքի լայն գօտիին մէջ խոթեց և սանտր մը հանելով նետեց անոր առջեւ:

— Դրամս ետ տու՛ր.
Որոտամայն արձակուած այս կըտուրակ հրամանին առջեւ Առաքել պահ մը ապշած մնալէ յետոյ, սանտրը սկսաւ զննել: Ես ալ զարմացած տեղէս ելայ և ընկերացայ իրեն, փղոսկրէ սանտր մըն էր որ արդէն թնճուք բռնած էր և ատափին մէկն ալ կոտորած:

— Ի՞նչ է, հօճա կէքնտի, ի՞նչ է պատահել հարցուց Առաքել շուարածս: — Ի՞նչ պիտի պատահի, դեռ կը հարցնե՞ս ալ—պատասխանեց հօճան նոյն բարկացայտ յեշտով—անխիղճ անհաւատ, խաբեր ես զիս, այս սանտրը ո՛չ թէ 35 դրուչ, 35 փարա իսկ չարժեք, մէկ անգամ մօրուքիս

նակեն, այս բանը սպառազայ կեանքին համար մեծ նշանակութիւն ունի. այս պատճառաւ ծընողաց սխալները յաճախ աղետաբեր կը լինան: Կրթութեան համար կարեւոր պայման մըն է նաեւ գեղարուեստը: Դասընթացը, սնունդը, ծանօթ ըլլալը, Լինչպէս որ երկրագործ մը պէտք է աչկէ ճանչնայ իր մշակելիք հողը նոյնպէս ալ գաստիարակ մը կաւարեալ ապահովութեամբ մանկան բնաւորութիւնը բարձրագոյն պէտք է ըլլայ: Այս ուսումնասիրութիւնն ընել շատ դիւրին է. մանկան առաջին տարիներէն սկսեալ, մինչ տղուն մեծնալուն հետ անոր բնաւորութեան թափանցկութիւնն ալ կը կորսուի, հետզհետէ անոր մէջ կածի գիտումնաւոր կերպով յոյժու և թագցնելու կարողութիւնը: Օտարներէն կը վախնայ, և միմիայն սրտակիցներուն կը բանայ, սն իր ներքին սշխարհը:

Տունը՝ բնտանիքը, մանկական ներքին աշխարհը ճանչնալու բոլոր պայմանները ունի: Այսպէս ուրիշ կրնանք ըսել թէ ընտանիքը մարմնական և հոգեկան զարգացման համար ամենէն նրպասաւոր միջավայրն է: Մանուկներու ապագան կախում է իրենց պատկանած ընտանիքին կեցողութեանէն, կրթական ըմբռնումէն ու նախապարաստութենէն: Այս պատճառաւ կողքէր Բեստալոցցի կրթութիւնը ընտանիքին յանձնել, և արագարեւ կրթութեամբ մարտնչելը կրնան ամենամեծ ազդեցութիւն մը ունենալ իրենց վաւերաց վերայ: Մայր մը միայն կրնայ իր վաւեր մոմի մը պէս ծածկ կամ շտկել: Արեւմտ ընտանիքի մը ամենէն նորիքան պարքն է մանուկներու կրթութիւնը: Ընտանիքներու կրթական կարողութենէն կախում է համայնքներու երջանկութիւնը. բարոյական վարքացումն ու ազնուացումն:

զօրկի ատամին մէկը թափեցաւ եւ մօրուքէս ալ փունջ մը մազ փետեց: — Տէր Աստուած, շատ բան լոբեր էի, բայց այս տեսակ փորձանքի գեո չէի հանդ/պեր—բացագանչեց Առաքել հայերէն, գլուխը թօթուելով եւ հօճային գառնալով թիւրքերէն շարունակեց—հօճա՛ էֆէնտի, Աստուած վկայ որ այս սունտը առաջնակարգ տեսակ է եւ ես շատ աժան ծախեցի ձեզի, ուրիշ տեղ սակէ վարնոցը 40-ի ալ չէիք կրնար տոնել: Եւ երկու հայ վաճառականներս մեր աճող լեզուանիութիւնը թափելով փոխասացութիւն մը սկսանք, համոզելու համար հօճա էֆէնտին որ իր մօրուքին այդ փետումին մէջ սանտը յանցանք չունէր: Սանտը ուրիշ գանազան տեսակներ վկայութեան ըրինք ապացուցանելու համար իր գնածին գերազանցութիւնը, սակայն իզո՛ր, մարդը մեղմանալու

մը: Մեծ և վտանգաւոր սխալ մըն է կարծել թէ կրթութիւնը միմիայն զպրօցներու գործն է. թէ ծնողքները ձեռքերնին ծալլած նստելու են վարժապետներու կամ վարժուհիներու յանձնելով իրենց վաւերները: Ան ճիշդ այս սխալ ըմբռնումին կրթութեամբ ծնողքները բան գործ ձգած՝ առտուր է մինչեւ իրիկուն վարժապետ ու վարժուհի կը քննադատեն, կը բամբասեն ու կը գանգաւորն անոնցմէ, իսկ հոգաբարձու պարոնները շուտաւ այս երեւոյթէն, յաջողութեամբ վարժուհի կամ վարժապետ կը փոխեն. մէկը կը ճամբեն, միւս լաւագոյնը լեւերու յոյսով և երբ տարին կը լրանայ—կամ թէ շատ անգամ տարին չը լրացած—հոգաբարձութիւնը կամ ծնողքները միեւնոյն գանգատները ու զժգոհութիւնները ունին իրենց բերնին մէջ: սա տարբերութեամբ որ այդ գանգատները փոխանակ նախորդ տարուան Դեկտեմբրին՝ այս տարուան Մարտին ուղղուած են:

(Շարունակելի)

ՄԻՋԱԶԳՈՒՅԻ, ԱՆԱՊԱՀՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄՆԵՐԸ
(Շար. 803 թիւէն)

Գործիքներէն յետոյ բանակին կազմակերպութիւնն ալ կը կատարելագործուի. Բանակը շարժման մէջ գնելու արագութիւնը զլիաւոր տեղը կը բռնէ հոս Գերմանիան առաւելութիւն մը ունի բաղդատելով ուսական բանակին դանդաղարժութեան հետ: Բայց թող Ռուսիան փոխէ իր բանակին շարժման կանոնները, Գերմանիոյ յարաբերական ապահովութիւնն ալ իսկոյն կանհետանայ:

Պէտք է քննել նաեւ ուրիշ ազգակ մը՝ զաշխարհութիւնները: Ժամանակ մը Գերմանիան Իտալիոյ և Աւստրիոյ աջակցութիւնը ապահովեց իրեն, Բայց չենք կրնար ըսել թէ այս ա

ամենափոքր տրամադրութիւն մը իսկ չէր հոյցներ եւ միշտ ոտքը գետին զարնելով դրամը կը պահանջէր ոպառնագին:

— Այս ապրանքը խանութը չի մնար, երբ ըլլայ կը ծախուի—ըսաւ վերջապէս Առաքել առանց իր քաղցր չեչուր փոխելով—եւ ես ձեր խաթերը համար առանց խօսք ընելու ետ կտունէի զայն, եթէ առամը կտորած չըլլայիք: Բայց հիմա ես որո՛ւ կըրնամ ծախել այս կտորած սանտը: — Ես չեմ կտորեր լի՛րբ, ինչո՛ւ սուտ կը խօսիս—պոռաց մօլլան աւելի կատաղած—առած առենս կտորած է եղեր, ո՛վ գիտէ փակցուցեր ես, ի՞նչ ես ըրեր, խաբեր ես զիս: Վերջապէս ալ երկար խօսք չեմ ուզեր, կա՛մ զրամս ետ կուտաս եւ կա՛մ... դուն պիտես:

Ամէն համբերութիւն սահման ունի ըսեր են, մինչեւ անգամ խանութ-

շակցութիւնը յաւիտենական պիտի ըլլայ, կրնայ պատանել որ իր զինակիցները քանեն զինքը: Այն ատեն Գերմանիան իզուր պիտի շատցնէ իր սպասարկութեամբ, երբէք չի պիտի կրնայ արգիլել անկէ աւելի հզօր զաշխարհութեան մը կազմուիլ: Ընդհակառակը, Գերմանիոյ զրացիները տեսնելով տան մշտապէս իր ոյժերը կուտելուն, պիտի վախնան ու պիտի կազմակերպեն ալ աւելի հզօր զինակցութիւն մը որով կարողանան դիմագրել: Այսպէս պատահած է, որ ինչպէս համար Լուզովիտ ԺԴ. ին՝ տասնութերորդ դարուն և Նաբոլէօն Ա. ին՝ տասնութներորդ դարուն: Այս պարագային ալ սպասագինման աւելացումը պիտի պակսեցնէ ու ոչ թէ պիտի աւելցնէ ապահովութիւնը:

Վերջին փաստ մը ևս. Երբ բանակները փոքրաթիւ ըլլան, անոնց պատճառովք շարիքն ալ նուազ կը լայ. բայց, որքան կոտորուներ թիւը աւելնայ, այն համեմատութեամբ կաւելնայ նաեւ շարիքը: Եթէ 200000 մարդ Գերմանիա արշաւեն այնքան մեծ շարիք չի պիտի հասցունեն քան թէ երբ 4 միլիոն մարդ ըլլան սրբաշատները: Պիտի ըսեն թէ, մեզ ի՞նչ փոյթ թշնամոյն երկիրը Բայց կրնա՞ք ապահովել թէ կու՞ր անպատճառ թշնամի հողին վրայ տեղի պիտի ունենայ: Ասկէ դատ 4 միլիոն մարդու զէնքի տակ կանչուիլը անգին ծախսերու կը կարօտի որո՞նք կը անանկացնեն ազգը նոյն իսկ յազթութեան մէջ: Ես բոլորը կապտեցանեն թէ սպասագինմանց ուղղակի արդիւնքը անապահովութիւնն է ու ոչ թէ ապահովութիւնը:

Բայց վայրկեան մը ընդունինք Միլիթարիսթներու սեսութիւնը, ընդունինք թէ շափազանց սպասագինումը արշաւանքներու դէմ ապահովութիւն մըն է:

Ապահովութիւն միայն չի բաւեր: Պէտք է զիտնալ թէ ինչ գնով այդ ապահովութիւնը ձեռք կը բերուի: Կարծես թէ ամէն բան լինած է, երբ ապահովութիւնն արտաւարտ սանները կը մոռնանք թէ կրնան տեղի ունենալ ոչ միայն նուազ շահաւոր, այլ և կործանիչ ապահովութիւններ, Երևակայեցէք վաճառական մը որ 0/0 ին 5 կը շահի իր ձեռնարկէն. եթէ այդ մարդը ստիպուած ըլլայ 0/0 6 ապահովութիւն մը վճարել այդ ապահովութիւնը առաջին

պահի եւ հայ խանութպանի հատրիութիւնը: Իմ համբերութիւնս արգէն վաղուց նստած էր, վերջապէս Առաքելին ներսն ալ համբերաւք չը մնաց: Զայրագին զգրոցը քաշեց, մէջէն եօթը հատ հինգոց սոսա ու հօճային նետեց:

— Ա՛ռ ու կորսուէ, ձեզի պէտքերուն հետ առուտուր ընելը փորձանք է. կերելի ի՛նչ կեանքիդ մէջ առաջին անգամն ըլլալով մօրուքիդ սանար կը զարնես. սանտըս ի՞նչ յանցանք ունի, երկաթ ըլլայ չի դ/մանար այդ աղտոտ մօրուքիդ... —

Հազիւ այս խօսքերը Առաքելի բերնէն ելած էին, երբ մօլլան—վա՛յ շունչանորդի կեանքը, մօրուքի՞ն կը հայհոյես—աղաղակեց ու անոր վրայ խոյացաւ:

Անմիջապէս օձիկ օձիկ փայլակներ շողացին աչքերուս առջեւ. ջիղերս պրկուեցան եւ պահ մը արձանացած

տարուան մէջ իսկ պիտի կործանէ զինքը: Պէտք է ձեռնտու գինով մը ապահովուիլ, նոյն իսկ եթէ ապահովութիւնը իր շահէն վար գնով ըլլայ, վաճառականին պարտականութիւնն է միշտ շանայ աւելի պակաս գին գրանելու: Այն վաճառականը որ կը շանայ աւելցնել իր ապահովագինը, խենթ է կըսենք քանի որ իր շահերուն հակառակ կը գործէ: Բայց այս վերջինն է որ կընեն շարունակ կառավարութիւններն ու պետական մարդիկ որոնց տղա յիմարներու խումբը քաղաքական «հանճար» սնունը կուտայ:

Պարզ է որ, եթէ պետութիւնները իրար հասկնան եւ միջազգային միութիւն մը կազմեն, պատերազմի վտանգներու դէմ, ապահովութեան գինը զէոսի կը հաւասարի: Ասիկա ոչ միայն ամենէն խնայողական, այլ նաև ամենէն իրական ապահովութիւնը եղած պիտի ըլլար: Ներկայ անիշխանութիւնը, որ արդիւնք է անապահովութեան, տարեկան տասը միլիոն ֆրանքի կը նստի, մինչդեռ միացեալ համաձայնութեամբ ձեռք բերուած ապահովութիւնը և ոչ իսկ սանդղմ մը պիտի սթէ:

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ՍԽԻՍՏԻԷՆ
— 3 —


Ռուսները «ԱՐԱՔԱ» երգեցիկ խումբը, որ հոգեկան հանդիսին հետ Ազգային զգացումն ալ վառ պահելու գեղեցիկ մասնաւոր կազմուած է,—ինքնաբերաբար բարութիւնն ունեցաւ—քաղաքս այցելելու՝ և Զատիկի Ա. օրը, երեկոյեան ժամ 9-ին, ազգասիրաբար Նուագահանդէս մը տուաւ, ի նպաստ մեր Ազգային Մանկապարտէզին:

Ներկայ հանդիսականները, որոնց մեծամասնութիւնը օտարներէ կը բաղկանար, զմայլմամբ ունկնդրեցին այդ սիրուն խմբի ներդաշնակ ու ճարտար նուագաւորութիւնը, ու իրենց բուն ծափերու արձագանքով թնդացուցին տեղուս «ՕՐԻՆՆ» ընդարձակ սրահը:

Այս առթիւ գոյացած զուտ հասոյթը, մօտ 400 ֆր. պիտի գործածուի յօգուտ «Մանկապարտէզի», որուն համար Հոգաբարձութիւնն ներկայիս կուգայ իր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնելու

մնացի: Յարձակի՛լ լիբը անպիտանին վրայ, գետին տապալելով լաւ մը տփել եւ ոտքէն քաշելով դուրս նետել... Բայց ոտքերս առանց վճռիս սպասելու յանկարծ փողոց նետեցին զիս... Ու շնչասպառ վաճառանոցս հասայ, առանց ետեւ նայելու:

(Շարունակելի)



«ԱՄՍՄ» պատ. խմբի անդիւ անդա-
մոց և անոր ղեկավար Քաֆէլ Մաւսի-
րօին :

Հոգաբարձութիւն Սիւսաբէի
Ազգ. երկ. վարժարանաց
8/21 Ապրիլ 1906
ՍՄՐՈՒՄ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Պրիւքսէլէն կիմացնեն. Սուլ-
թանի կենացը դէմ է դամ մահա-
փորձի առթիւ մահու գտա-
պարտուած փորձիւր ներման ար-
ժանացած է ու քիչ օրէն Պրիւք-
սէլ կը հասնի :

(Մ. խ.) Ի՞նչ պիտի ըլլան անոր
ընկերակից հայերը :

— «Թաւաղ» լրագիրը շատ
խիստ կերպով կը յարձակի թուրք
կառավարութեան վրայ, Սինա-
տեան թերակղզիին վրայ ունե-
ցած յաւակնութեան և թուրք
զինուորներու թաւաղ գրաւելու
մասին խօսելով «Թաւաղ» կը
պնդէ թէ Սուլթանը պէտք է որ
իր զինուորները ետ քաշէ, Անգ-
լիան այն ժամանակ միայն կըն-
դունի թուրք սահմանագիծ յանձ-
նախուժը, որ պաշտօն ունի
թրքա-եգիպտական հարցը յար-
դարել :

— Թաւաղի ու Ահապի միջա-
դէպի մասին Անգլիական դես-
պանութիւնը այլեւս չը զիջանիր
Բ. Իրան հետ բանակցութեան
մտնել : Հիմայ բանակցութիւն-
ները եգիպտոսի կայսերական
գործակատար Մուխթար բաշայի
և եգիպտական նախարարութեան
միջև կըլլան : Իրաց ներկայ վի-
ճակէն այնպէս կը թուի թէ
Անգլիական կառավարութիւնը
այլևս կարելորութիւն չտար այս
միջադէպիս :

— Պարսկական դեսպան, Միր-
զա Րիզա խանը ամսոյս 10 ին
Երլուզ գոցեր է պարսկա-թրք-
քական միջադէպի մասին : Ենթ
գիմուտները ընելու Սուլթանի, որ
վերջինը կը համարուի : Թէ ինչ
եղած է այս տեսակցութեան ար-
դիւնքը դեռ ևս յայտնի չէ, սա-
կայն քաղաքական շրջանակներու
մէջ այնպէս կը կարծեն թէ քիչ
օրէն ամէն բան խաղաղօրէն կը
վերջանայ :

— Սօֆիայի Մակեդոնական
շրջանակներու մէջ լուր կը շրջի
թէ՛ զնդապետ Եանգովը ընդհա-
րուով մը ժամանակ սպաննուած
է : Գնդապետը սակէ ամիսներ
առաջ հրոսակախմբի մը գլուխ
անցած մտած էր Մակեդոնական
երկիրը : վերջին լուրերու հա-
մաձայն նա ապէց շաքաթ մը
առաջ վէլէջ գիւղի մօտ թուրք
զինուորներու հետ կռուի կը
բռնուի, կռուի մէկուկէս օր կը
շարունակուի, Եանգովի հրոսա-
կախմբէն 13 հոգի կը սպաննուի :

Կը կարծուի թէ՛ Եանգովը չը
կրնալով խոյս տալ թուրք զին-
ուորներու հետապնդումէն՝ կը
ստիպուի մինչև վերջին շունչը
կռուի :

Այս լուրը սակայն ստուգու-
թեան կալօտ է :

— Սուլթանը չը սեանուած
եռանդով մը կը ճգնի իսլամու-
թիւնը ճարտիւյ մէջ տարածելու
թուրք կառավարութիւնը յանձ-
նախուժը մը կուզարկէ, ներկայ
գտնուելու համար Թոքթոյի մէջ
կայանալիք համաժողովին, ուր
պիտի քննուի և ձեռուի այն
հարցը թէ որ կրօնքը աւելի
հաստատ հիմք ունի և կը յար-
մարի ճարտական ազգի բարո-
յականի, ու սովորութեանց : Բ.
Դուռը կուզէ Թոքթոյի մէջ դես-
պանութիւն մը հաստատել :

Ո Ո Ւ Ս Ւ Ա

«Մանչեսթր Կարտիան» լրագիրը
կը հաւատէ թէ՛ չորս յեղափո-
խականներ Կարոն քահանան
կախած են, որոնք զանի կառա-
վարութեան լրտես կը համարէին :
Այս յեղափոխականներէն մին,
որ Կարոն կը լրտեսէ եղբոր, յա-
ջողած է զայն թակարգի մը մէջ
ձգել ու հոն իր ընկերներով մի-
ասին կախած է Կարոնը :

«Թրիպուլի» լրագիրը «Ման-
չեսթր Կարտիան»ի տուած լուրը
կը հերքէ ու կը յաւելու թէ՛
Կարոն քահանայի աներեւութա-
նալը խաղաղարարութիւն մը ըլ-
լայ :

«Տէլլի թէլէկրաֆ»ի Բեթերս-
պուրկեան թղթակիցը կը հա-
ւատէ թէ՛ Կարոնը սպաննուած
չէ, ստոյգ է սա միայն թէ նա
կորսուած է անհետք կերպով :

— Բեթերսպուրկէն «Վոսիչէ
Յայթուկ» լրագրի քաջուած հե-
ռագրի մը համաձայն Վիթէն 7
կէս միլիօն ռուպլի վարկ մը
պահանջած է, ներկայ ամսոյս
վերջերը շատ մը զօրա-
բանակներ զինելու նպատակով :

— Սահմանագրա—Ռամկալա-
րական կուսակցութեան կեդրո-
նական քոմիթէն, հետեւեալ կո-
չը կը հրատարակէ :

Լրագիրները Բեթերսպուրկ-
եան հեռագրական գործակատա-
րութեան մէկ ծանուցումը հրա-
տարակցին, որու համաձայն
ազգային ազատութեան կուսակ-
ցութիւնը, հրէական հարցի նը-
կատմամբ իր առաջուան որոշումը
փոխած է : Կեդրոնական կոմիթէն
կը յայտարարէ թէ՛ այս որո-
շումներու փոփոխութեան մասին
ոե է առաջարկ մը եղած չէ, այս
իսկ պտտառուով այս տարածա-
նուած լուրը կատարեալ ստայոյ
է :

— Օ. Էսայի ընտրութիւններու
մէջ ալ ոահմանագրական ուսմ
կալարականները տարած են

յ. զիտութիւնը : Եսայիական
ընտրութեանց մէջ 80 ընտրուած
ներէն 79ը սահմանագրա ուսմ
կալարական են : Հաւանական է
որ ճումարի համար երեսփոխան
ընտրուի ուսուցչապետ Շտէրքի
նը :

ՅԲ. ԱՆՍԱ

Մոնղէլիմ րի մէջ հանրապե-
տութեան նախկին նախարար
պետ Լուպէրի կենացը զէմ մա-
հափոյ ձ մը եղած է, սակայն բա-
րեքաղաքար ժամանակին նը-
մարուելով կրցեր ձն անոր բնա-
կած տանը պատահանին առջեւ
գրուած ուսմբին պատրոյգը
խզել :

— Կործադուրը կը շարունակ-
ուի, սակայն առաջուան սուր կեր-
պարանքը չունի, սեւ տեղ մի
այն մասնակի ցոյցեր կըլլան :

— Աշխատութեան տօնին օրը,
Մայիս 1 ին նոր տուժա, միայն
Իւրիզի մէջ գործաթողներու
թիւր կը կարծուի թէ 80000 ի
պիտի յանգի, որոնցմէ 20000 ը
վտանգաւոր յեղափոխականներ
են : Ստիկանութիւնը այժմէն
իսկ շափեր ձնաք կառնէ ամէն
խաւովութիւն ժամանակին խա-
փանելու նպատակով, նոյն իսկ
լուր կը շրջի թէ՛ 500 ի շափ
ուսմը կայ պատրաստուած յեղա-
փոխականներու կողմանէ :

ՆՆԳԼԻԱ

Անգլիոյ թագաւորը և թագու-
հին Միլանս կերթան Յուլիան-
դէսը տեսնելու : Անոնք երկու
օր Միլանս պիտի մնան :

— Քաղաքական շրջանակներու
մէջ այնպէս կը կարծեն թէ՛
Անգլիոյ թագաւոր էտուարտը Ա
թէնք գտնուած ժամանակամիջո-
ցին, յունա-րոմանական միջա-
դէպի յարգարման ոյժ տուած է.
այսու յոյները լրջօրէն խրատած
է Մակեդոնիոյ խաղաղութիւնը
չը խտնագործել :

Ի Տ Ա Լ Ի Ա

Ամսոյս 11 ին տեղի ունեցած
երեսփոխանական նիստին մէջ
Տէմարգիինսի երեակ նիզակակ
ցութեան : Անգլիոյ հետ պիտի
մշակէ Իտալիան իր կնքիոյ հետ
ունեցած անձնական և աւանդա-
կան բարեկամութիւնները պիտի
մշակէ, ինչպէս նաև այն սրտա-
գին բարեկամութիւնը որ զանի
ձրանսայի հետ կը զօդէ : Մի-
ջազգային կացութիւնը փոխուած
չէ, Ալմէզգիբասի համաժողովը
ցուցադրեց թէ Եւրոպիոյ մէջ
խաղաղասիրական ոգին է որ կը
տիրապետէ : Նախարարը այս յայ-
տարարութենէ անմիջապէս վեր-
ջը կը յաւելու : Մեր գրութիւնը
Ալմէզգիբասի համաժողովին մէջ
շատ փափուկ էր, մենք պէտք էր
որ ըլլայինք համաձայնութեան
միջնորդը : Իրաց կացութեան

բացարձակ պահպանումը պիտի
քանտան թերակղզիի և Ատրիա-
դիկի եզերքի վրայ հարկ ան-
հրաժեշտ է : Երեակ նիզակակ-
ցութիւնը պայքաններու համար
երաշխատութիւն մ'է, ասով
մենք պահանջ ենք թէ՛ առանց
մեր գիտակցութեան Մակեդոնիոյ
մէջ ոե է փոփոխութիւն մը չը
կրնար ըլլալ : Կառավարութիւնը
Անգլիոյ և Յիւանսայի հետ կա-
պահովէ Դիլերկրական ծովու և
Ափրիկէի մէջ ռուսական շահե-
րը : Աւստրո Իտալական յարա-
բերութեանց մէջ ոե է փոփո-
խում մը չկայ, անոնք շատ սր-
տագին են : Իտալիան, սակէ ետքն
ալ պիտի շարունակէ այս քաղա-
քականութիւնը :

Տէր Ղեկնուի ԵՊԻՍԿ. ՇԻՇՄԱՆՆԱՆ

ԻՍ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ

ՀԱՆԴԵՐՋ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԻ
Ս Ո Ւ Ր Ք Տ Ե Ղ Ե Ա Ց

Լրագրական կանխահաւ նկատողու-
թիւններու հետեւեալ շատ մը
ազգայիննկու կողմէ եղած թախան-
ձանաց առջեւ տեղի տալով, անցեալ
Փետրուար ամսու մէջ սկսուած է
հրատարակութիւնը հանդուցեալ Տէր
Ղեկնուի Եպիսկոպոս Շիշմանեանի վե-
րոյնչեալ երկասիրութեան, որ 554
60 պրակի կրնայ հասնի, որոնց վեց
պրակները արդէն հրատարակ ելած
են :

Հանդուցեալ Գերապատիւ Հեղինա-
կին գրաւոր յայտնած հաւանութեամբ
ներկայ հրատարակութեան զուտ հա-
տոյթէն, կարեւոր մաս մը ԲԱՐԵՎՈՐ-
ԾԱԿԱՆ ԵՊՍՏԱԿԱՆՐՈՒ պիտի յատ-
կացուի, այդ պատճառաւ յատկապէս
(500) ՀԻՆԳ ՀԱՐԻԻՐ օրինակ կը
պատրաստուի՝ անոնց վաճառման
արդիւնքը՝ 20,000 դրը ողջ առ այդ
նպատակ գործածուելու համար :

Արդի պահանջմանց բերմամբ՝ փա-
փաքելի է որ այդ գումարէն օգտուին,
կովկասի արկածնայնքը, Գոսիթի
Հայկ. Բար. Միութիւնը եւ Թուր-
քիոյ այլ եւ այլ տեղերու բանտե-
րուն մէջ հեծեծող նիժադգ բան-
տարկաւնները՝ որոց դառն կացու-
թեան անձին փորձով ծանօթացած է
Միւրազան Հեղինակը : Այս նուէրին
գործադրութեան եւ պրակներու ժամ
առաջ սպառման ջանքերու համար
այժմէն պէտք է բանակցիլ Մասնա-
խմբիս Գարուար Ը. Եղիշէ Թո-
րոսեանի հետ :

ԿԱՆՈՒԿ ԲԱՓԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Եգիպտոսի համար 40 դր : ողջ է, իսկ
Արասահմանի համար 42 ու կէս ֆր.
Իւրաքանչիւր պրակ մէկ դր : ողջ
կայմէ :

«ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԻՆ» վերաբերեալ
ամէն կարգի թղթակցութիւն, զրամ
եւայլն, հարկ է ուղղել Մասնախմբիս
Հանդուցեալ-Գարուարի հասցէին՝
որ է Տիար Է. Թորոսեան լը Բէր
(Եմիթ)

ԿԱՐԿԱԳԻՐ ՄՍԱՆԱԽՈՒՄԻ
Գահրէ 10 Մարտ 1906
ԾԱՆՕԹ.— Ամերիկայի, Պուրկարիոյ,
եւ կովկասի համար վտտանելի գոր-
ծակաւններու պէտքը կայ. Դիմել վե-
րագրեալ հասցէին.
«Ա. քորի կեանք»-ին համար Մաս-
նախմբին կողմէ Թիլիպէի համար
գործակալ անուանուած է Տիար Ա-
ղէքսանդր Տէմի ճիպաշեանը :